

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ. ՈՐՈՇԵԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳԵՐ

ԵՌԻՐԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ

yuavetisyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Գոյականի առկայացման քերականական կարգի իմաստային առումները եւ քերականական արտայայտութեան ձեւերը որոշակի փոփոխութիւնների են ենթարկուել հայոց լեզուի պատմական զարգացման ընթացքում: Այդ իսկ պատճառով հայերէնի քերականութեան ուսումնասիրութիւններում, դրանք յաճախ են դարձել քննութեան ու քննարկումների առարկայ: Հարցին քիչ թէ շատ հանգամանօրէն անդրադարձել են Մանուկ Աբեղեանը, Հրաչեայ Աճառեանը, Սերգէյ Աբրահամեանը, Գեորգ Զահուկեանը, Մանուէլ Ասատրեանը, Յակոբ Չոլաքեանը, Արմենակ Եղիայեանը¹ եւ ուրիշներ: Հարցի ամէնից հետեւողական ուսումնասիրութիւնը, նիւթի դասակարգումն ու նկարագրութիւնը կատարել է Հրանտ Պետրոսեանը: Կատարուած է մեծ ծաւալի աշխատանք, արուել է շատ մանրակրկիտ ու հանգամանալից քննութիւն²: Սակայն մեր համոզմամբ՝ դասակարգման առանձին կէտեր եւ սկզբունքներ այսօր կարիք ունեն վերանայման եւ վերաճեալեւերպման: Գիտական այդ կարիքի բաւարարմանն է ուղղուած տոյն ուսումնասիրութիւնը:

ՏԵՍԱԿԷՏ ԵՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Առկայացման քերականական կարգի իմաստային կողմն այն է, որ ցոյց է տալիս առարկայի տարրորոշուած յարաբերութիւնը խօսողութեան մասնակիցների (հաղորդակցուողների) հետ կամ այդպիսի յարաբերութեան բացակայութիւնը: Առկայացումը հայերէնում իրացում է հիմնականում յօդերի միջոցով, այսինքն՝ քերականական ցուցիչները յօդերն են՝ **ս, դ, ն/ը, մի**: Դրանք, բացառութեամբ **մի**ի, առաջացել են համապատասխան դերանուն-

¹ Մ. Աբեղեան, *Երկեր, հրք. 2*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974. նաեւ՝ Ս. Աբրահամեան, *Ժամանակակից հայերէնի քերականութիւն*, «Լոյս» հրատ., Երեւան, 1975. նաեւ՝ Հ. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, հ. II*, Երեւան, 1954. նաեւ՝ Ա. Եղիայեան, *Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց*, Պէյրութ, 2022. նաեւ՝ Գ. Զահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974. նաեւ՝ Յ. Չոլաքեան, *Գործնական արեւմտահայերէն*, Անթիլիաս, 2018:

² Հ. Պետրոսեան, *Ակնարկներ հայերէնի պատմական ձեւաբանութեան (յօդային կարգ)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1976:

ներից՝ *ս<ես-այս-սա, դ<դու-այդ-դա, ն<նա-այն*: Այդ իսկ պատճառով մենք սրանց կոչում ենք նաեւ **դերանուանական յօդեր**:

Յօդերը, դրուելով գոյականների, ինչպէս նաեւ գոյականաբար գործածուած այլ բառերի վրայ, նրանց բառային-բառական իմաստը քերականօրէն առարկայացնում, տարբերակում, մասնատրում, տարրորոշում, այսինքն՝ առկայացնում են: Այս կարգը երբեմն կոչում են նաեւ **տարրորոշման կարգ**, իսկ յօդերը՝ **առկայացնող** կամ **տարրորոշիչ յօդեր**:

Մասնագիտական գրականութեան մէջ սկզբնապէս տարբերակուել են յօդերի **անուանական (ը/ն)** եւ **դերանուանական** տեսակներ (**ս, դ, ը/ն**)՝ ըստ գոյականի եւ դերանուան հետ կամ դրանց փոխարէն գործածութեան սկզբունքների: Եւ ըստ այդմ՝ առաջինները ներկայացուած են գոյականի, իսկ երկրորդները՝ դերանուան համակարգերում³: Արեղեանը այսպիսի տարբերակում չի կատարում. դրանք նկարագրում է առանձնաբար՝ ըստ իմաստի առանձնացնելով յօդերի չորս տեսակ՝ *ցուցական, դիմորոշ, սպացական, որոշեալ (որոշող ն յօդ)*⁴:

Յօդերը գրեթէ նոյն կերպ են պատկերուել ու նկարագրուել յետագայ քերականութիւններում: Նոր ժամանակներում այս սկզբունքի հետեւողական պաշտպաններից Ալեքսանդր Մարգարեանը իր նախորդների հետեւողութեամբ առանձնացնելով անուանական եւ դերանուանական յօդեր տեսակները՝ առաջինները (**ը** եւ **ն** յօդերը) քննում է որպէս առանձին քերականական կարգի արտայայտման միջոցներ՝ «Գոյականի որոշեալ եւ անորոշ առման քերականական կարգը» խորագրի տակ, իսկ երկրորդները (**ս, դ, մասամբ՝ ը/ն**) պատկերում եւ նկարագրում է՝ որպէս դերանուանական յօդեր, քանի որ վերջիններս, ըստ նրա, «պահպանում են իրենց սերտ կապը դերանուան հետ» եւ գործածուում են որոշ (անձնական, ցուցական) դերանունների փոխարէն⁵: Սկզբնապէս գրեթէ նոյն կերպ է հարցը ներկայացրել նաեւ Աբրահամեանը⁶: Հարցի ուսումնասիրութեան պատմութեան եւ տեսութեան մէջ յեղաշրջում կատարեց Զահուկեանը: Ինդիքը դիտարկելով կառուցուածքային լեզուաբանութեան դիրքերից՝ նա յօդերը առանձնացրեց դերանուններից եւ քննարկեց միայն գոյական խօսքի մասի համակարգում՝ որպէս նրա քերականական կարգերից մէկի՝ առկայացման ձեւային ար-

³ Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1987, էջ 22 («Անուան յօդը»), 185-193 («Յօդերու գործածութիւնը»), 204-206 («Դերանունական յօդեր»): Նաեւ՝ Ս. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Տպարան Մ. Վարդանեանի եւ ընկ., Թիֆլիս, 1884, էջ 36-39 («Գոյական անունների յօդը»), էջ 67-68 («Դիմորոշ կամ դերանուանական յօդեր»):

⁴ Արեղեան, էջ 800-2:

⁵ Ա. Մարգարեան, *Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2004, էջ 318-23:

⁶ Աբրահամեան, էջ 41:

տայայտութեան միջոցներ: Այսինքն՝ գոյականի քերականական կարգերի կառուցումը Զահուկեանը յաւելում է մի նոր կարգ՝ **առկայացման կարգը**: Ըստ որում, լեզուաբանը այս կարգի մէջ առանձնացնում է երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան** եւ **ցուցաստացականութեան**: Առաջինը արտայայտութեան ծիրում բնորոշում է **ը** եւ **ն** յօդերի առկայութեամբ եւ դրանց հետ կապուած **Օ/ը, Օ/ն** հակադրութիւններով (մարդ-մարդը, տղայ-տղան): Երկրորդ ենթակարգը արտայայտութեան առումով բնորոշում է **ս, դ**, մասամբ նաեւ **ը** եւ **ն** յօդերի առկայութեամբ, որոնք, ըստ լեզուաբանի, «բովանդակութեան պլանում արտայայտում են ցուցա-ստացական, բուն ցուցական եւ դիմորոշ իմաստներ»: Այս տեսակէտը տարածում գտաւ եւ տարբեր զարգացումներով արտացոլուեց յետագայ քերականութիւններում⁷: Աբրահամեանը, նախընտրելի համարելով **առկայացման** կամ **տարորոշման** կարգ անուանումը, դրանում առանձնացնում է չորս ենթակարգեր, որոնք համարում է առկայացման կարգի քերականական իմաստի դրսեւորումներ՝ ա) որոշեալութիւն, բ) ստացականութիւն, գ) դիմորոշութիւն, դ) ցուցականութիւն: Անորոշութիւնը լեզուաբանը քննարկում է միայն որոշեալութեան հետ ունեցած ձեւային եւ բովանդակային հակադրութեան մէջ⁸: Այս մօտեցմամբ, սակայն, որոշեալութիւնը՝ որպէս ենթակարգ, հակադրում է միայն անորոշութեանը եւ համարժէք է դիտում միւս ենթակարգերին՝ առանձին-առանձին վերցրած: Մինչդեռ անորոշութեան ենթակարգը, մեր կարծիքով, իր քերականական իմաստով (անորոշութիւն կամ տարորոշութեան բացակայութիւն) եւ իր քերականական ձեւով (զրօ ձեւ կամ **մի** յօդ) հաւասարապէս հակադրում է որոշեալութեանը, որը իմաստային առումով (որոշեալութիւն, տարորոշութեան) իր մէջ է առնում միւս ենթակարգերը կամ յօդային առումները:

Մանուէլ Ասատրեանը, առանձնացնելով առկայացումը՝ որպէս գոյականին յատուկ քերականական կարգ, «Առկայացման (որոշեալի եւ անորոշի) քերականական կարգը» վերնագրի տակ ըստ էութեան տալիս է յօդերի գործառական նկարագրութիւնը, ներկայացնում է դրանց գործառոյթները (ցուցական, ստացական, դիմորոշ, որոշիչ յօդերի եւ **մի** անորոշ յօդի գործառոյթները)⁹: Հայերէնագիտական բառարանի հեղինակ Պետրոսեանը, ով տարիներ շարունակ զբաղուել է հայերէնի առկայացման կարգի ուսումնասիրութեամբ, կատարում է շատ հետաքրքիր դիտարկում: Կարգը նա անուանում է **առկայացման** եւ **անառկայացման** կարգ, որում առանձնացնում է հինգ ենթակարգեր՝ *ցուցական, դիմորոշ, ստացական, որոշեալ, ա-*

⁷ Զահուկեան, *ժամանակակից հայերէնի*, էջ 208-13:

⁸ *ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրք. 2*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1974, էջ 106-22:

⁹ Մ. Ասատրեան, *ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1983, էջ 96-110:

նորոշ¹⁰: Այս բաժանման մէջ, սակայն, կարծում ենք, կայ կառուցուածքային եւ բովանդակային որոշ անհամապատասխանութիւն: Եթէ Պետրոսեանը **անառկայացում** եզրը գործածում է **անորոշ առման** վերաբերեալ, ապա դրանով նա այդ առումը հակադրում է միւս բոլորին՝ միասին վերցրած, որոնք այս տրամաբանութեամբ պէտք է հակադրուէին վերջինիս՝ որպէս **առկայացման կարգի** դրսեւորումներ: Մինչդեռ անորոշ առումը **նախ**՝ ձեւային (**զրօ** կամ **մի** յօդ) եւ բովանդակային (առկայացման բացակայութիւնը՝ չառկայացումը) հակադրութիւն ունի միւս բոլոր առումների հետ առանձին-առանձին: Բացի այդ, առկայացման բացակայութիւնը կամ չառկայացումը նոյնպէս տարորոշման, այսինքն՝ առկայացման դրսեւորում է եւ պէտք է հակադրուի միւսներին «հաւասարի իրաւունքով»: Ինքը՝ հեղինակը, **անորոշի** եւ **որոշեալի կարգը** համարում է «**առկայացման** կարգի ամենաբնորոշ իմաստաւորումները» (*ընդգծումը - Եռ. Ա.*): Հետեւապէս այս դէպքում միանգամայն աւելորդ է դառնում **անառկայացում** եզրի ներմուծումը՝ որպէս անորոշ առման անուանում: Եւ պատահական չէ, որ հեղինակը այդ իւրօրինակ եզրը գործածում է միայն մէկ անգամ, այն էլ բառայօդուածը անուանելիս: Այսպիսով, կարծում ենք՝ ե՛ւ կառուցուածքային, ե՛ւ բովանդակային առումներով առաւել համոզիչ է **առկայացում (առկայացման կարգ)** եզրի գործածութիւնը, որը իր մէջ առնում է երկու առումները կամ ենթակարգերը:

Հայոց լեզուի ակադեմիական հրատարակութեան հեղինակները որոշեալութիւնը վերագրում են յօդերի բոլոր տեսակներին. «*Կարելի է նաեւ այդ կարգի ընդհանուր իմաստը համարել որոշեալութիւնը, - կարդում ենք գրքում, - քանի որ **ս, դ** յօդերն իրենց արտայայտած ստացականութեամբ, ցուցականութեամբ, դիմորոշութեամբ որոշեալութիւն են հաղորդում բառին, իսկ **ը(ն)** յօդի որոշեալութիւնն ինքնին հասկանալի է*»¹¹: Միանգամայն համոզիչ համարելով այս դիտարկումը՝ յաւելենք միայն, որ առկայացման կարգի իմաստային դաշտը, ըստ էութեան, չի սահմանափակւում միայն որոշեալութեամբ: Այն ներառում է նաեւ անորոշութիւնը, որը իր ե՛ւ իմաստային իւրայատկութեամբ (ցոյց է տալիս տարորոշուած յարաբերութեան բացակայութիւնը՝ չառկայացումը), ե՛ւ արտայայտութեան ձեւով (**զրօ ձեւ** կամ **մի** անորոշ յօդ) ըստ էութեան հակադրում է որոշեալութեանը: Ունենք քերականական ձեւի եւ քերականական իմաստի յստակ արտայայտուած հակադրութեամբ երկու եզր, այնպէս, ինչպէս թուի քերականական կարգում՝ եզակիի եւ յօգնակիի հակադրութիւնը: Դա հիմք է տալիս առկայացման քերականական կարգում առանձնացնելու երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան ենթակարգ** եւ **անորոշութեան ենթակարգ**. դրանցից իւրաքանչիւրը

¹⁰ Հ. Պետրոսեան, *Հայերէնագիտական բառարան*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1987, էջ 50-56:

¹¹ *Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հրր. 2*, էջ 106-7:

քերականական նոյն կարգի կառուցուածքային դրսեւորումներից է: Մենք առաջարկում ենք առաջնորդուել առկայացման կարգի ըմբռնման եւ նկարագրութեան այս սկզբունքով:

1. ՈՐՈՇԵԱԼՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ: Իրենց դերանուանական նշանակութեամբ պայմանաւորուած՝ յօդերը տարրորոշուած առարկան ցոյց են տալիս տարբեր կերպ, հետեւապէս բաժանուում են տարբեր խմբերի՝ **ստացական, ցուցական, դիմորոշ, որոշիչ:**

Ստացական յօդ: Ստացականութեան նշանակութեամբ ժամանակակից հայերէնում կարող են գործածուել **ս** եւ **դ** յօդերը: Դրուելով գոյականի կամ այլ խօսքի մասի վրայ՝ ցոյց են տալիս առաջին կամ երկրորդ դէմքի պատկանելութիւն (խօսքս, տունս, գործերդ, ասածներդ): Երկրորդաբար արտայայտուում են նաեւ որոշեալ առման իմաստ. **գլխարկս** նշանակուում է *իմ գլխարկը, գլխարկդ՝ քո գլխարկը*. ստացական յօդ կրող բառը որոշարկուած է, որոշեալ է:

Ստացական յօդերը կարող են փոխարինել ստացական համարուող դերանուններին՝ **հարցս-իմ հարցը, հարցդ-քո հարցը**: Սրանք հոմանիշ քերականական ձեւեր են. ստացական դերանունը ընդգծուում է առարկայի պատկանելութիւնը: Գրական արեւելահայերէնում ընդունելի է կա՛մ յօդով, կա՛մ դերանունով տարբերակը. կրկնակի ստացականութիւնը (իմ հարցս, քո գիրքդ) գրական արեւելահայերէնին յատուկ չէ:

Արեւմտահայերէնում ընդունուում է նաեւ կրկնակի ստացական կազմութիւնը, ինչպէս՝ «Ափ մը մոխի՛ր, աճիւնիս հետ, Հայրենի տուն Ափ մը մոխի՛ր **քու մոխիրէդ** ո՛վ պիտի բերէ, **Քու յիշատակէ՛դ, քու ցաւէ՛դ, քու անցեալէ՛դ**, Ափ մը մոխիր...**իմ սրտիս** վրան ցանելու...» (Սիւսմանթօ), «Իսկ ես կանգնած Սրտատրուփ՝ **Քու նայուածքիդ** կը սպասէի» (Ա. Նազգաշեան): Արեւմտահայերէնում կանոնական է համարուում նաեւ ստացական դերանունան հետ կապի՝ յօդով գործածութիւնը. «Ուրախ եմ, որ ինձի Հայաստանով մեծցուցիք, հպարտ եմ, որ արմատներըս ճիւղաւորուած են **իմ մէջս**» (Ա. Նազգաշեան), «Ոչ, դուն **իմ մասիս** մի՛ մտածեր» (Վ. Աւագեան), «Ինչքանով յանձնուիս անոր, **քու վրադ** իշխանութիւն կը ստանայ» («Ժամանակ»): Այս կազմութիւնը գալիս է գրաբարից («Ի **մարմինդ քո** բուսցի փուշ եւ տատասկ» (Փաւստոս Բուզանդ)) եւ լայն տարածուում ունէր նաեւ միջին հայերէնում («**Աչերս իմ** սակաւ հայի» (Ֆրիկ), «Հիանդ եմ **քո սիրուդ, Քո մէջքդ** է քան զուռ բարակ, **քո ծըծերդ** ի մէջ բարունակ» (Քուչակ), «**Շրթունքդ է քո լար**», «**Քո մէջքդ** է բարակ» (Աղթամարցի)), որը գործածուում էր միւս ձեւերին՝ միայն ստացական յօդով («**Աջօքդ, ունովդ** անես, զիմ տխմար խելքս կու տանիս» (Քուչակ)) եւ կամ միայն դերանունով («.....նա **իր** յերկարութենովս զսրտինկու հասցնէ» (Ասար Սեբաստացի), «Հարք եւ եղբարք **իմ** պատուական» (Մինաս Թոխաթեցի)) կազմութիւններին զուգահեռ: Հետեւաբար՝ ե՛ւ գրաբարում, ե՛ւ միջին հայերէնում սովորական էին ստացական յօդով, ստացական դերանունով եւ կրկնակի ստացականով կազմութիւններ:

րը: Բոլոր այդ երեք ձեւերն էլ անցան արեւմտայերէնին, իսկ արեւելահայ գրականին՝ միայն առաջին երկուսը:

Երկու գրականներում էլ ստացական յօդ կարող են ստանալ՝

ա) բոլոր այն գոյականները (յատուկ թէ հասարակ, եզակի թէ յոգնակի՝ անկախ հոլովից), որոնց ցոյց տուած առարկան կարող է պատկանել մէկին (իմ գիրքը, քո տետրը, մեր տունը), իսկ, օրինակ, **արեւ, լուսին, երկրագունդ, մոլորակ** եւ նման գոյականները, որոնց անուանած առարկաները չեն կարող պատկանել մէկին, ստացական յօդ կարող են ստանալ փոխաբերական իմաստով գործածուելիս գեղարուեստական գրականութեան մէջ, դարձուածքներում եւ այլուր (**արեւս** խաւարեց, ապրի **արեւոյ**, դաւանանքս անսահման է, որքան **տիեզերքս**),

բ) փոխանուն ածականները (**Փոքրոյ** որտե՞ղ է սովորում, **Մեծովս** կը հպարտանամ), թուականները (**Յիսունս** արդեն լրացել է, **Երկուքդ** ալ պիտի երթաք),

գ) անորոշ, յարակատար, ենթակայական դերբայները (Պիտի փոփոխե՞ս **մարդասիրելոյ**, **Չիմացածդ** բաներից մի՛ խօսիր, **Ընթերցողդ** սպասում է քո յաջորդ գրքին, **Գիտցածդ** բաւարար չէ),

դ) մի շարք դերանուններ (**Ի՞նչդ** է ցաւում, **Ո՞րտեղդ** մնասուեց, **Ոչնչովդ** մի՛ հպարտացիր, **Ամէն ինչիցդ** մի քիչ բեր, Այս յաղթանակը **ո՞րերորդդ** է: **Ոչ մէկուդ** կը վստահեմ),

ե) մի քանի կապեր (**Հետդ** կը գամ, **Վրադ** աչք կայ, **Մօ՛տս** նստիր, **Մէջս** հաւատ չի մնացել, **Դէ՛մդ** նայիր, **Քովս** եկուր),

զ) ինքնանուանողաբար գործածուող իւրաքանչիւր լեզուական միաւոր (Եթէներ-**դ** թո՛ղ, միացի՛ր մեր թիմին, Այդ ինչու-**դ** մտահոգիչ է, Այդ X-**դ** ի՞նչ կը նշանակէ, Ոչ-**ս** չի նշանակում, որ ամէն ինչ բացառում եմ):

Յարադիր բարդութիւնները սովորաբար յօդն ընդունում են երկրորդ բաղադրիչի վրայ՝ *տուն ու տեղս, ազգ ու տակդ, քիթ ու բերանդ, մէկն ու մէկդ, ձեռ ու ոտս, ուշք ու միտքդ*:

Ոմանք ստացականութեան իմաստ են տեսնում նաեւ **ն/ը** յօդի մէջ, բայց դա, մեր կարծիքով, այդ յօդի համար տիպական չէ, քանի որ վերջինս այդ իմաստը դրսեւորում է կա՛մ միայն ձեւերի հակադրութեան մէջ՝ *գիրքս (իմ գիրքը)/գիրքդ (քո գիրքը)/գիրքը (նրա գիրքը)*, կա՛մ երբ դրում է այնպիսի գոյականների վրայ, որոնք արտայայտում են մասի եւ ամբողջի յարաբերութիւն (Տուն է վերադառնում. **գործը** (=իր գործը) աւարտեց) կամ անկախ յօդից՝ ինքնին ստացական իմաստ ունեն. նրանց նշանակած առարկաները կամ անձերը իրականութեան մէջ ունեն իրենց կրողը, պատկանում են ինչ-որ մէկին (Վրդովուեց, **ձեռքը** խփեց սեղանին, Նա **ոտքը** վնասել է, Ճանաչում եմ նրան. **հայրը** մեզ մօտ է աշխատում): Դրանցում «**ը/ն** յօդն ունեցող բառերի ստացական իմաստը չի բխում յօդից. դա բառի ներքին ստացա-

կան իմաստըն է, որի երրորդ դէմքի վրայ որոշակիացումը տրամաբանօրէն բխում է տեքստից՝ պայմանաւորուած **ս, դ** յօդերի բացակայութեամբ»¹²:

Յոգնակի ստացականութիւնը կազմում է **ս, դ** յօդերով եւ **ն** մասնիկով: Արեւելահայերէնում ունի կազմութեան հետեւեալ իւրայատկութիւնները. Յոգնակի ստացական են կազմում ա) գերազանցապէս միավանկ գոյականները (բացի գրաբարեան **ն** վերջնամասնիկ ունեցող գոյականներից)՝ **աչք-ներ-ս** լոյս, **ծեղք-ներ-ս** չի բռնում, **խօսք-ներ-դ** մէկ էք արել, բ) անորոշ, երբեմն էլ յարակատար դերբայը՝ **խօսել-ներ-դ** դադարեցրէք, **ասած-ներ-ս** կը յիշես, **պատմած-ներ-դ** չեմ մոռանայ, գ) նաեւ այն գոյականները, որոնք ցոյց են տալիս այնպիսի առարկայ, որից մարդը մէկ հատ ունի տուեալ դէպքում կամ սովորաբար մէկն է ունենում՝ **գլուխ-ներ-դ** բա՛րձր պահէք, **լեզու-ներ-դ** ձե՛զ քաշէք, **անուն-ներ-դ** չլսեմ, **բերան-ներ-դ** փակ կը պահէք:

Հարցը ուսումնասիրողներից Դաւիթ Գիւլգատեանը քերականական այս փաստը հակուած է համարելու գրական հայերէնի եզակիութեան դասի մէջ ստեղծուած թուի մասնաւոր իմաստային-քերականական դրսեւորում, որը անուանում է **առանձնական եզակիութեան քերականական իմաստ**, իսկ այդ իմաստն ունեցող համապատասխան ձեւը՝ **առանձնական եզակի թիւ**՝ որպէս եզակի թուի տարբերակ: Նա ելնում քերականական այդ ձեւի հետեւեալ ոչ կանոնական ինքնատիպ յատկանիշներից՝ **ա**. հնչիւնափոխութեան ենթակայ հնչիւն(ներ)ի անհնչիւնափոխ գործածութիւն (սիրտներս, տուններդ, դուռներդ, միտքներս), **բ**. ստացական յօդի առկայութիւն, **գ**. միավանկ բառերի համար անսովոր **ներ** յոգնակերտ ստանալը, **դ**. բառածեւի՝ ենթակայի պաշտօնում բայ-ստորոգեալի հետ եզակի թուով համաձայնելը («տուններդ **շինուի**», «սիրտներս նեղուած **է**», «գիրքներս **մնաց** լսարանում»)՝¹³:

Մենք գործածել ենք **յոգնակի ստացականութիւն** (ստացական յոգնակի) եզրոյթը՝ հաշուի առնելով քերականական այդ իրականութեան ձեւաւորումը (կազմում է **ներով**), յոգնակիութեան իմաստը՝ **ստաց.+յոգն. (սիրտներս** - մեր սիրտը/մեր սրտերը, **խօսքներդ** - ձեր խօսքը/ձեր խօսքերը, **գլուխներս** - մեր գլուխները) եւ իհարկէ աւանդոյթը¹⁴:

Յոգնակի ստացականութիւնը շատ տարածուած է արեւմտահայերէնում եւ կազմութեան մէջ ըստ էութեան որեւէ սահմանափակում չունի. արեւմտահայերէնում ստացական յոգնակիի ձեւեր կարող են ունենալ ե՛ւ միավանկ, ե՛ւ բազմավանկ բառերը: Տարբեր է նաեւ կազմութեան սկզբունքը. «**Մեր, ձեր, իրենց** ստացական դերանուններուն փոխարէն (մեր տունը,

¹² Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հոյր. 2, էջ 115:

¹³ Դ. Գիւլգատեան, Գրական արեւելահայերէնի քերականութեան հիմունքներ, Գլոբալ համալսարանի հրատ., Երեւան, 2016, էջ 63-64:

¹⁴ Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, հոյր. 2, էջ 118-19:

ծեր տունը, իրենց տունը) գոյականը ստացական կ'ըլլայ **նիս, նիդ, նին** մասնիկներով,- գրում է Չոլաքեանը,- որոնք կրնան հոլովուիլ հետեւեալ կերպ՝ պարտէզնիս, պարտէզնուս, պարտէզնէս, պարտէզնովս. կրկնակ յոգնակներ՝ պարտէզներնիս, պարտէզներնուս, պարտէզներնէս, պարտէզներնովս: Նոյն յարացոյցով նաեւ **նիդ եւ նին**: Այդոնեան լաւ կը համարէ կրկնակի յոգնակներու փոխարէն ըսել մեր պարտէզները, ձեր պարտէզները, իրենց պարտէզները: Միավանկ բառերու պարագային գոյականը կը դրուի միշտ յոգնակի, թէեւ թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի իմաստ կ'արտայայտէ՝ հայրերնիս, հայրերնուս, հայրերնէս, գործիականը ունի այլ կառոյց՝ հայրերովս»¹⁵: Այս ձեւերը, ինչպէս ասուեց, յաճախակի գործածութիւն ունեն նաեւ արդի գրական արեւմտահայերէնում, ինչպէս՝ «Ո՛վ լեռներ, **գլուխնիդ** բարձր բռնեցէք, Լիճե՛ր, գեղեցկագոյն մեղեդիներ հնչեցուցէ՛ք» (Վեհ. Թեքեան), «Որքան ալ **գլուխներնիդ** զարնէք պատեպատ, Վիճակուած է բոլորիդ ընդգրկումն անխուսափելի» (Վարան), «Քաշուեցանք ճամբուն մէկ կողմը, **վիզերնիս** ծած, **աչքերնիս՝** գեպին՝ ինչպէս գիւղին բոլոր անհամարձակ պզգրիկները» (Չոլաքեան), «Կեանքի կորուստներ, **տուններնիս-տեղերնին** ձգած մարդիկ...» (Անուշ Նազգաշեան):

ՅՈՒՑԱԿԱՆ ՅՕԴ

Ժամանակակից հայերէնում ցուցականութեան իմաստ ունի **ս** յօդը: Գործածում է **այս** դերանունան նշանակութեամբ. ցոյց է տալիս ժամանակի կամ որեւէ բանի մօտ՝ մերձ լինելը խօսողին: Գրաբարում յօդային առումների մէջ գերակշռող է եղել ցուցականութիւնը՝ **եկեղեցիս-այս եկեղեցին, եկեղեցիդ-այդ եկեղեցին, եկեղեցին-այն եկեղեցին**: Միջին հայերէնի նոյնիսկ ուշ շրջանում պահպանում է այդ յօդերի ցուցական նշանակութիւնը. յօդերի հետ միաժամանակ գործածում են նաեւ համապատասխան դերանունները, ինչպէս գրաբարում էր («Աստուած երբ զաշխարհս արար» (Քուչակ), «Եւ այնպէս հատնի **այդ** տաքութիւնդ, որպէս եւ ճրագին եղն հատնի», «**այս** աշխատանացս պակսելուն», «Եւ **այս** պատճառիս համար մարդն հանապազկենդանի չի մնալ եւ **այս** մահուս բժշկապետքն բնութեան մահու ասեն» (Ասար Սեբաստացի))¹⁶: Աւելի ուշ արդէն՝ վաղ աշխարհաբարի շրջանում, ցուցականութիւնը սահմանափակում է գրեթէ միայն **ս** յօդի կիրառութիւններում:

Ժամանակակից հայերէնում ցուցական յօդ ստանում են հիմնականում ժամանականիշ գոյականները՝ **օր, գիշեր, վայրկեան, դար, ժամ, ժամանակ, ամառ, ձմեռ**, ինչպէս նաեւ **մարդ, աշխարհ, վերջին, տեղ, քաղաք** եւ նման մի շարք բառեր. **Ձմեռս մեկնելու ենք Եգիպտոս: Վերջերս նա քիչ**

¹⁵ Չոլաքեան, Գործնական արեւմտահայերէն, 2018, էջ 31:

¹⁶ Միջին հայերէնի ուղեցոյց-քրեստոմատիա, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2019, էջ 201-318:

է այցելում ծնողներին: Տեսայ հնազեդին եւ նկարչին. **վերջինս** շատ յուզուած էր: **Մարդս** երկու անգամ է մեռնում կեանքում. մէկ՝ երբ ֆիզիկապէս է մեռնում, մէկ էլ՝ երբ դադարում են նրան յիշել: **Տեղիս** բնակչութիւնը գնալով նուազում է: Մենք **բառիս** բուն իմաստով առիծի նման զինուորներ ունենք: **Օրերս** հանդիպեցանք: **Ամառս** զուր պիտի անցնի:

Յուցական յօդի եւ ցուցական դերանուն համատեղ գործածութիւնը (**Այս վերջերս** շատ քիչ եմ քեզ տեսնում) յանձնարարելի չէ:

Ս յօդի իմաստը ակնյայտօրէն խամրել է, այդ պատճառով էլ խօսքից դուրս շփոթում է ստացական յօդի հետ: Օրինակ՝ «Հոգեկան **աշխարհս** տակնուվրայ է լինում»: =Իմ հոգեկան աշխարհը: / «**Աշխարհս** մէ փանջարայ է»: =Այս աշխարհը: Բայց՝ «**Օրս** (=իմ օրը/այս օրը) լիքն է տագնապ-ներով»:

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴ

Ձեւաւորում է **ս, դ** յօդերով: Դրուելով գոյականների վրայ՝ դրանք արտայայտում են Ա. կամ Բ. դէմքի քերականական իմաստ: **Ս** յօդը ցոյց է տալիս խօսողի, իսկ **դ** յօդը՝ խօսակցի դիրքում գիտակցուող կամ գտնուող առարկայ: Այս յօդերի դիմային նշանակութիւնը նկատելի աւելացաւ ուշ միջին հայերէնում («Վախեմ՝ սիրոյ տէր լինիս, լուս պակա՛ս տաս **աստընուորիս**»․ Քուչակ, «Երբ որ եփէք զհերիսան Հայր մեր յերկինս ով որ ասէ ինձ **դարիպիս** կեր տաք արժան...» (Մինաս Թոխաթեցի))¹⁷:

Պէտք է ասել, որ արդի հայերէնում սրանց դիմային նշանակութիւնը թուլացել է, քանի որ յաճախ այդ նշանակութիւնը ընդգծելու համար գործածում ենք համապատասխան դերանունների հետ՝ *ուսանողս>ես՝ ուսանողս, ուսանողդ>դու՝ ուսանողդ*:

Դրում են՝

* անձնանիշ կամ իբրեւ անձ վերցուած գոյականների եւ անձ ցոյց տուող միբանի դերանունների վրայ (Եւ մի՛ ընդհարուիր, տէ՛ր, այդքան խստութեամբ՝ Մեծդ փոքրիս հետ, **լոյսդ՝ ստուերիս**, Տէրերի **տէրդ՝** երկրային **տիղմիս**, Մենք **ամէնքս** հիւր ենք կեանքում, **Մէկդ** չմտահոգուեց, **Ոչ մէկիդ** չեմ ուզում տեսնել),

* ենթակայական եւ յարակատար դերբայների վրայ (Մեղայ ոչնչից կեանք **ստեղծողիդ**, ստուգիւ մեղայ, Մի՛ գանահարիր արդէն **ընկածիս**, մեղաւոր եմ ես),

* յատկանիշ ցոյց տուող բառերի (ածական, դերանուն եւն.) վրայ (Մեղայ **պարտականս** անկենդան մահուան, **ծաղրելիս** մեղայ, Մեղայ ես **մեծիդ**, Ընդունիր դու այս փոքրը **տկարիցս** եւ շնորհիր մեծը **հգօրիդ** կողմից, Մեղայ **անպատկառս**՝ բարձրութեանդ հանդէպ, **տաղտկալիս** մեղայ, Եւ նոյն բարբառով կը ցնծանք **բոլորս**):

¹⁷ Նոյն, էջ 285, 318:

Դիմորոշ յօդը երբեմն շփոթում է ստացական յօդի հետ: Երբեմն շարայարութիւնից դուրս առանձին նախադասութեան մէջ նոյնիսկ հնարաւոր չի լինում որոշել՝ դիմորոշութեա՞ն հետ գործ ունենք, թե՞ ստացականութեան, ինչպէս, օրինակ՝ **Շինարարներիդ լաւ աշխատանքի մասին յաճախ եմ լսել, Հաւաքի մասնակիցները արագ շրջապատեցին աշխատակիցներին**: Անորոշութիւնից խուսափելու համար այսպիսի դէպքերում պէտք է գործածել համապատասխան դերանունը՝ **Ձեր՝ շինարարներիդ** (**///Քո շինարարների**) լաւ աշխատանքի մասին յաճախ եմ լսել, Հաւաքի մասնակիցները արագ շրջապատեցին **մեզ՝ աշխատակիցներին** (**///մեր աշխատակիցներին**): Երբ դիմորոշ յօդ ունեցող բառը նախադասութեան մէջ կատարում է ենթակայի պաշտօն, ապա նրա դիմորոշ լինելը հասկացում է ստորոգեալի դէմքով՝ **Ուսուցիչս պարտաւոր էի դա անել** (դիմորոշ յօդ) / **Ուսուցիչս պարտաւոր էր դա անել** (ստացական յօդ):

Դիմորոշ յօդի գործածութիւնը յատուկ է բարձր ոճին. խօսքին հաղորդում է պաշտօնականութիւն, որոշ վերամբարձութիւն, հանդիսաւորութիւն, նաեւ բանաստեղծականութիւն: Դա ամէլի է ընդգծում, երբ գործածում է միայն դիմորոշ յօդը՝ առանց համապատասխան դերանուն: Խօսքին վերամբարձութիւն է հաղորդում նաեւ **դ** յօդով կոչականի գործածութիւնը՝ գրաբարի ազդեցութեամբ՝ **Սիրելի՛դ իմ, դու մաքուր ես որպէս արեգակը, Աստուած անքնին, Ամենակարո՛ղդ, ամէնքի համար եւ ամէն բանում բովանդակապէս**:

ՈՐՈՇԻՉ ՅՕԴ

Որոշեալութեան քերականական իմաստն արտայայտում է **ը** եւ **ն** յօդերով, որոնք, դրուելով գոյականի կամ գոյականաբար առնուած բառի վրայ, ցոյց են տալիս առարկայի որոշակի, յայտնի, ծանօթ լինելը հաղորդակցողներին: Ծագումնաբանօրէն **ըն** յաջորդում է **ն**ին: **Ըն** առաջացել է վերջնայանգում գաղտնավանկ **ըի** զարգացումով («Կռել, կոփել **զդուռ(ըն)** Երուանդայ արքայի») «Հայերէնի մէջ,- գրում է Աճառեանը,- **ըն** յանգով բառերն անշեշտ հնչման պատճառով կորցնում են իրենց վերջին (**ն**) ծայնը, այսպէս՝ ծուկն>ծուկը>ծուկ, եօթն>եօթը>եօթ: Սրա համեմատ էլ բաղաձայնայանգ բառերը իրենց ծայրի որոշիչ **ն** յօդը դարձրին (**ը**)»¹⁸:

Կարծիք կայ, որ «**ն** որոշեալ յօդի.... ձեւաբանական տարբերակը՝ **ը** յօդը», **նի** հետ միասին գործածուել է «միջին հայերէնի կազմաւորման շրջանում»¹⁹, ասել է թէ՛ առնուազն 12րդ դարից սկսած: Բայց մեր դիտարկումները ցոյց են տալիս, որ այս պնդումը այնքան էլ հիմնաւոր չէ: Կարծիքը պաշտպանողների բերած բնագրային օրինակներում անգամ այդ միտքը

¹⁸ Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, հպր. II*, էջ 987:

¹⁹ Միջին հայերէնի ուղեցոյց-քրեստոմատիա, էջ 92-93:

հաստատող փաստեր չեն արձանագրում²⁰։ Ըստ այդ բնագրերի լեզուական նիւթի՝ «**ըն** յանգով բառեր»ը գրութեամբ արտացոլուած են ոչ թէ միջին հայերէնի «կազմաւորման շրջանի», այլ ուշ միջնադարի՝ 16րդ դարի հեղինակների, մասնատրապէս՝ Նահապետ Քուչակի տաղերում (զղարիպին *ղադրըն* գիտենաս, *Ըզբարըն* սնարք առնես, *Ջաղեկըն* այլ գիրկս առնեմ, Ծոցուդ *յոյսըն* դուրս ծագէ, որ *գեպինըն* կուտ չուտէի, *Մարիկըն* վաղուց մեռել²¹), որը վկայում է քերականական այս իրողութեան՝ ուշ միջնադարի մատենագրութեան մէջ առաջ գալու մասին։ Իսկ ինչ վերաբերում է **ը** յօդի՝ որպէս առանձին քերականական ցուցիչի գործածութեանը, ապա դա ակնյայտօրէն աւելի նոր ժամանակների երեւոյթ է, որի մասին խօսուում է նաեւ մասնագիտական այլ աղբիւրներում. «*Միջին հայերէնում ն որոշիչ յօդը*, - կարդում ենք Զահուկեանի խմբագրած աշխատութիւններից մէկում, - *չունի իր դիրքային տարբերակը՝ ը, որ աւելի նոր ժամանակների ծնունդ է եւ զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնչիւնական որոշ օրէնքների գործողութեան հետեւանքով*»²²։

Գրաբարում առման ցուցիչ էր նաեւ **զ** նախդիրը։ Կիրառման ոլորտը շատ սահմանափակ էր. գործածուում էր միայն որոշեալ հայցականի դէպքում՝ որպէս նախդիր («*երբեմնի [2] նախդրի ձեւաբանական ուրոյն գուգորդման հետեւանք էր*»)։ Անորոշ առման դէպքում գրաբարի հայցական հոլովը **զ** նախդիր չէր առնում, ինչը վկայում է, որ այն որոշեալ առման ցուցիչ է։ Սակայն երբ **ն** յօդը ընդլայնեց իր գործածութեան ոլորտը եւ առման ցուցիչ դարձաւ նաեւ հայցականում, **զ**ն կալմաց-կամաց զիջեց իր դիրքերը։ Դեռեւս գրաբարում որոշեալ հայցականում **զ** յօդը սկսում է ընկնել²³։ Այն գրաբարից անցել է նաեւ միջին հայերէնին եւ կենսունակ էր միջին հայերէնի նաեւ ուշ շրջանում։ **Զ** նախդիր/յօդը պահպանուել է նաեւ **կը** ճիւղի միջանի բարբառներում՝ Մշոյ, Տիգրանակերտի եւն.։ Փոխանցուել է նաեւ արեւմտահայերէնին եւ մասամբ գործածական էր արեւմտահայերէնի գրականացման շրջանում, բայց յետագայում դադարեց որոշեալ առման ցուցիչ լինելուց եւ հանդիպում է առանձին դերանունների գրաբարեան եւ գրաբարածէ կազմութիւններում՝ **գոր, գով, զինք(ը), զայն, զիս**, երբեմն՝ քարացած գրաբարածեւերում՝ **գոր օրինակ**։ 20րդ դարի սկզբներին եւ նոյնիսկ փոքր-ինչ աւելի ուշ արեւմտահայերէնում լայն կիսողութիւն ունէին **մենք, դուն, դուք, այս, այդ**, դերանունների գրաբարածէ հայցականները՝ **զմեզ, զքեզ, զձեզ, զայս, զայդ**։ Այդ ձեւերը քիչ բացառութիւններով յետագայում դուրս մղուեցին գրական լեզուից։ Այս միտումը նկատի ունէր Աճառեանը,

²⁰ Նոյն, էջ 201-82։

²¹ Նոյն, էջ 282-91։

²² *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հրր. Բ.*, խմբ.՝ Գ. Զահուկեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ7, Երեւան, 1975, էջ 79։

²³ Հ. Պետրոսեան, *Ակնարկներ հայերէնի պատմական ձեւաբանութեան*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1976, էջ 17-18։

երբ տակաւին անցեալ դարի քառասունականներին գրում էր, որ նշուած դերանունների գրաբարեան զուգաձեւերը հնացած են եւ «կէս դար առաջ» միայն «գրաբարեան հեղինակներ»ի կողմից օգտագործուող²⁴:

Իմաստային տարբերութիւններ չունեն **ըն** եւ **նն**. Նոյն յօդի դիրքային տարբերակներ են. ձայնաւորով վերջացողները ստանում են **ն** յօդը (Մեր **ուղին** անյայտ է), բաղաձայնով վերջացողները՝ **ը** (**Գարունը** այնքա՛ն ծաղիկ է վառել, **Արամը** ընկերս է): Եթէ յաջորդող բառը սկսւում է ձայնաւորով, բառը կարող է ստանալ **ն** յօդը (**խօսքերն** անգոր են այդ մեծ վիշտը փարատելու համար, Քանի իմ **հողն** ինձ չէք տուել, Ձեզ ելուզակ պիտի ասեմ):

Արեւմտահայ դասական գրականութեան մէջ լեզուի նորմաւորման շրջանում **հ**, **յ** հնչիւններով, իսկ երբեմն նաեւ բաղաձայնով սկսուող բառերից առաջ **ն** յօդի գործածութիւնը սովորական էր, ինչպէս՝ «Ձոր կը տանէր մօրն՝ վարդին հետ իր շրթանց», «Երգեց գարունն հասակին...» (Դ. Վարուժան), «Յոյզով մ'անհուն, անպատմելի Գրած տողերն քառեակին» (Մ. Մեծարեոց): **Ն** յօդի այսպիսի կիրառութիւնները յետագայում դուրս մղուեցին գրական լեզուից:

Ձայնաւորով սկսուող բառից առաջ **ը** կամ **ն** յօդի գործածութիւնը ունի ոճական-արտայայտչական արժէք: Ըի գործածութիւնը ենթադրում է արտասանական որոշակի դադար, որը իր հերթին շեշտում է յօդով միաւորի արտասանական-իմաստային ինքնուրոյնութիւնը եւ կարեւորութիւնը (Այդ **հարցը** այսօրուան նիստի քննարկման առարկայ մի՛ դարձրէք): Նոյն դիրքում **նի** գործածութիւնը ենթադրում է խօսքի աւելի արագ տեմպ (Այդ **հարցն** այսօրուայ նիստի քննարկման առարկայ մի՛ դարձրէք): Դրանցից մէկը կամ միւրը գեղարուեստական տեքստում գործածում է նաեւ խօսքի կշռոյթը պահպանելու համար. հմմտ.՝ **Կումն առայ** (**Կումը առայ**) *ելայ, գնացի սարը, Ճամփին ինձ հանդիպեց իմ ֆիդան եարը, Փղոսկրէ անիւներով Հեռանում է բախտն (**բախտը**) *օրէցօր, Մթնում է դէմքն* (**դէմքը**) *աւեգակի, Խամրում է հաւքը ոսկեցով*:*

Որոշիչ յօդ են առնում ոչ միայն գոյականները, այլեւ առարկայի յատկանիշ ցոյց տուող բոլոր այն բառերը, որոնք գործածում են գոյականաբար, ինչպէս՝ *մեծը, մեծերը, հաճելին, բարին, տասնհինգը, երրորդը, խօսելը, նստածը, արտագրողը, բոլորը, այդքանը, որը* են.:

Ժամանակակից գրական արեւելահայերէնում որոշիչ յօդ չեն ստանում սեռական-տրականով յատկացուցիչը (գրքի էջը, վարդերի բոյրը) եւ որոշիչը (սարի ծաղիկ, խմելու ջուր), բացառական, գործիական, ներգոյական հոլովները. **քաղաքիցը, քաղաքովը, քաղաքումը** բարբառային ձեւեր են:

Ինչպէս նկատուել է լեզուաբանութեան մէջ, ժամանակակից հայերէնում որոշիչ յօդի գործածութիւնը ունի որոշակի առանձնայատկութիւններ.

²⁴ Աճառեան, *Լիակապար քերականութիւն հայոց լեզուի*, հ. II, էջ 80:

1. Կարող է արտայայտել ոչ թե տուեալ որոշակի առարկան, այլ առարկայի հասկացական նշանակութիւնը. ցոյց է տալիս տուեալ հասկացութիւնն ընդհանրապէս (ինչպէս անորոշ առման դէպքում է)՝ **Մարդը մի քիչ պէտք է ամօթ ունենայ:**

2. Կարող է արտայայտել ոչ միայն իրականում ծանօթ, յայտնի առարկայ (անձ), այլ պարզապէս խօսքում նախապէս յիշատակուած առարկայ, մի առարկայ որը միջնորդաւորուած է յայտնի՝ խօսքով, արարքով, ինչ-որ յատկանիշով՝ **Նկարիչը ցուցադրեց իր նոր նկարներից մի քանիսը. վերջին նկարը մի առանձնայատուկ խորհուրդ ունէր:**

3. Յօդը կարող է փոխարինել գոյականին. դրուելով ոչ գոյական խօսքի մասերի վրայ՝ նրանց հաղորդում է գոյականի յատկանիշեր՝ **Բարին միայն հեքիաթներում է յաղթում:**

4. Առանձին դէպքերում, երբ դրում է յատկապէս նիւթ ցոյց տուող գոյականների վրայ՝ ցոյց է տալիս ծաւալային ամբողջութիւն, առարկան իր ամբողջ ծաւալով, հմմտ.՝ **Ալիւր թափուեց եւ Ալիւրը թափուեց, Գինի խմեց եւ Գինին խմեց:**

5. Կարող է փոխել դարձուածքի իմաստը. հմմտ.՝ **հացը կտրել (1. հիւրասիրուել, 2. զրկել)/հաց կտրել (հիւրասիրուել), աչքի ընկնել (առանձնանալ, աւելի տեսանելի դառնալ)/աչքին ընկնել (երեւալ), սիրտ առնել (համարձակուել)/սիրտը առնել (մխիթարել), անուն հանել (յայտնի դառնալ)/անունը հանել (անուանարկել):**

Որոշիչ յօդերի գործածութիւնը շատ հետաքրքիր առանձնայատկութիւններ ունի արեւմտահայերէնում: Հայերէնի դասական քերականութիւնը արձանագրում է, որ ենթակայի պաշտօնում արեւմտահայերէնի ուղղական-ենթական հանրածանօթ անձնանունների դէպքում սովորաբար յօդ չի ստանում («Ենթակայի պաշտօնով՝ պատմական կամ պաշտօնական անձերու յայտուկ անունները յօդ չեն առներ»²⁵)՝ **Մաշտոց հայոց գիրերու ստեղծողն է, Հայկ հեռացաւ Բաբելոնէն (բայց՝ Հայկը իմ բարեկամն է):** Այս երեւոյթը արեւմտահայերէնին է անցել գրաբարից՝ գրաբար-միջին հայերէն-արեւմտահայերէն փոխանցմամբ: Արդի արեւմտահայերէնի լեզուական նիւթի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս սակայն, որ սա օրինաչափական երեւոյթ չէ արեւմտահայերէնի համար: Յատուկ անձնանունների անյօդ գործածութիւնը խօսակցական լեզուի ազդեցութեամբ կարծես սկսում է նահանջել (օրինակ՝ «Հիմա պատկերացուցէք, Սասունցի Դաւիթը խեղճ պառաւի մը արտին մէջ լոր կ'որսայ, դուն դասարան նստեր ես» (Չոլաքեան)): Այս երեւոյթը, սակայն, արեւմտահայ քերականագէտը ընդունելի սովորական չի համարում. «...Շատ սովորական է մեր թերթերուն մէջ հանդիպիլ սապիսի կիրարկութեան. «**Փութինը** Թրամփին առաջադրած է...», - սապէս

²⁵ Եղիայեան, էջ 721:

գրողը կարծես Պուրճ Համուտի փողոցներուն մէջ ամէն օր գնդիկ կը խաղայ Փութինին հետ, այնքան մտերմութիւն ու ջերմութիւն կը բուրէ ոճը»²⁶:

Երբ նոյն նախադասութեան մէջ առկայ է խնդրի պաշտօնով մէկ ուրիշ անձնանուն, ուղղական-ենթական կարող է յօդ չստանալ՝ «**Յակոբ(ը)** բանախօսութիւնս չհանեցաւ»:

Աշխարհագրական յատուկ անունները գործածուած են թէ՛ յօդով, թէ՛ առանց յօդի՝ «**Քարիզ** աշխարհի քաղաքն է, **Լոնտոն** աշխարհի ոստանն է» (Գ. Օտեան), «**Պոլիսը** ստեղծեց իր գրական աշխարհն ու յատուկ լեզուն» (Գ. Պըլտեան):

Արեւմտահայերէնում որոշիչ յօդ սկզբունքօրէն կարող են ստանալ հոլովական բոլոր ձեւերը՝ **պապին ժամացոյցը** (յատկացուցիչ-յատկացեալ), **պապի ժամացոյց** (որոշիչ-որոշեալ), **պապի ժամացոյցը** (յատկացուցիչ-յատկացեալ/որոշիչ-որոշեալ), **Մանկիկը քեզի կը ժպտէր մօրը գիրկէն, Մարդս ինք միայն կրնայ շինել իր Աստուծուն նըրիրուած տաճարը, իր մէջքովը, իր ձեռքերովը, իր խեղովը**²⁷: Բնագրային այլ օրինակներ՝ «Մեղա՛յ Հայուն **Վատութեանը** համար, մեղա՛յ Հայուն **փերեզակութեանը** համար, մեղա՛յ Հայուն **կարճամտութեանը** համար» (Շ. Շահնուր), «Բայց շրթունքները կը պրկէ, աչքին **ծայրովը** ինծի կը նայի, յետոյ խմիչքին» (Ա. Արծրունի), «...քիմքիս բուրմունք խլրտացող **հոտերովը** կեանքին» (Ս. Սանան): Այդպէս էր նաեւ միջին հայերէնում՝ «Քրիստոսի դատաստանին **աւրինակովն** պարտի թագաւորն **զիր իրաւունքն** տանել ըղորդ» (Սմբատ Սպարապետ, 13րդ դար), «Յէն քաղցրաճայն գուսանուն **ն**, Զբերանդ լիզել տաս շներուն **ն**» (Յովհաննէս Թլկուրանցի, 14-15րդ դարեր), «...նա տուն **ն** տաքնայ եւ իր նուրբ գոլշով **ն** զտան **ն** զօդ **ն** տաքցնէ, որ ամէն տուն **ն** տաք լինի», «...որ ի ծննդեն **ն** բերել կու սկսնու», «...տան զառոջութիւն զանծին **ն** օգնականութեամբ **ն** Ասուծոյ» (Ասար Սեբաստացի, 16րդ դար)²⁸:

Հայերէնի քերականութեան մէջ նշում է, որ արեւմտահայերէնում որոշիչ եւ յատկացուցիչ սեռականների համար յօդառութիւնը քերականական տարբերակիչ յատկանիշ է. յատկացուցիչ սեռականը պարտադիր յօդ է ստանում (ինքնաշարժներուն երթեւեկը, գիւղին ճամբաները, խրտուիլակները արտերուն). առանց յօդի գործածուելիս դառնում է որոշիչ (ինքնաշարժներու երթեւեկ, գիւղի ճամբաներ, խրտուիլակներ արտերու): Ըստ որում, ինչպէս ցոյց են տալիս օրինակները, յատկացուցիչ սեռականը պահանջում է որոշեալ առումով յատկացեալ: Այսօր այս երեւոյթը մասնակի փոփոխութեան է ենթարկուել. ինչպէս վկայում են բնագրային օրինակնե-

²⁶ Նոյն:

²⁷ Աւելի մանրամասն տե՛ս՝ Ե. Ս. Աւետիսեան, *Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգարդական քերականութիւն*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2007, էջ 48-53. նաեւ՝ Եղիայեան, էջ 721-23, 757-59:

²⁸ *Միջին հայերէնի ուղեցոյց-քրեսպոմապիա*, էջ 201-318:

րը, յատկացուցիչ սեռականի համար սովորական է նաեւ անյօդ գործածութիւնը, ինչպէս՝ «Ստիպուեցայ ճամբուս վրայ ցանցնել, **վերադարձի յոյսը** պահպանելով» (Մ. Երամեան), «Յատնաբերելու **սրբութիւններու** ծայրագոյն **միտոնը**» (Ս. Սաննան), «Բայց կ'ըսեմ կարելոր բան մը, որ հայ մարդը, հայ **մարդու շնորհը** երբեք չի պակսիր», «Դուք զարմանալով պիտի համոզուիք, թէ հայկական «խաւար» **բառի պատմութիւնը** ո՛չ թէ մթութեան եւ տրտմութեան պատմութիւն է, այլ՝ լոյսի եւ սիրոյ» (Ակօս), «Իբրեւ անձնազոհներ՝ դուք **հայրենիքի ազատութիւնը** գերագոյն նպատակ դարծուցիք» (Ազրակ):

«...Սեռական հոլով աշխարհագրական յատուկ անունները կը կիրարկուին նախընտրաբար առանց յօդի՝ **Արարապի** գագաթը, **Սարդարապատի** հերոսամարտը, **Նեղոսի** ջուրերը...: Խորթ է **Արարապին** գագաթը եւ այլն»²⁹: Բացառական հոլովով աշխարհագրական յատուկ անունները գործածուում են միայն որոշիչ յօդով (Ամերիկայէն անդին, Ֆրանսայէն կու գայ, Լիբանանէն անցանք), իսկ գործիականով աշխարհագրական յատուկ անունները որոշիչ յօդ չեն առնում (կը հպարտանամ Հայաստանով)³⁰:

Արեւելահայերէնում 19րդ դարի վերջերից սկսած, այսինքն՝ կարգաւորման շրջանում արդէն, բացառական, գործիական եւ ներգոյական հոլովներին՝ որոշիչ յօդով ձեւերը աստիճանաբար սկսեցին դուրս մղուել մշակուող գրական լեզուից. *տանիցը, գիւղիցը, գործիքովը, մութովը, քաղաքումը, անտառումը* եւ նման ձեւերը արդի արեւելահայերէնում, ինչպէս ասուեց, բարբառային-խօսակցական են:

Տարակարծութիւններ կան **ը** եւ **ն** յօդերի գործածութեան յաճախականութեան վերաբերեալ: Ճիշտ է, **ն** յօդի գործածութեան ոլորտը տեսականօրէն աւելի լայն է, քան **ը** յօդինը, քանի որ դրում է ձայնաւորայանգ բոլոր բառերի վրայ (**Երեխան** լաց է լինում, **Գինին** թափուեց), այլեւ կարող է դրուել բաղաձայնայանգ բառերի վրայ՝ ձայնաւորով սկսուող բառերից առաջ (**Գիրքն** ընկաւ սեղանից, **Խօսքն** ասարտեց), սակայն խօսքային միջավայրում գործածական մեծ յաճախականութիւն ունի **ը** յօդը. խօսքաշարում՝ բաղաձայնով սկսուող բառերից առաջ, որոնք անհամամետ մեծ թիւ են կազմում, **ն** յօդի գործածութիւնը ըստ էութեան բացառուում է, որի հետեւանքով գործնականում էապէս նուազում է նրա գործածականութիւնը: Ի դէպ, քանի որ արեւելահայերէնի համեմատութեամբ արեւմտահայերէն խօսքի տեմպը աւելի դանդաղ է, ուստի ձայնաւորից առաջ **ը** յօդի գործածութիւնը արեւմտահայերէնում համեմատաբար յաճախակի է:

Ենթակայի պաշտօնում որոշիչ յօդ չի առնում **Աստուած** բառը (Յիսուս Քրիստոս, Հայր Աստուած). «**Աստուած** ամենակարող է», «**Աստուած** ձեզ պահապան»:

²⁹ Եղիայեան, էջ 723:

³⁰ Նոյն:

2. ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ

Յոյց է տալիս չտարորոշուած առարկայ: Իրականում, որպէս այդպիսին՝ իր ձեւային եւ բովանդակային յատկանիշերով անորոշ առումը հակադրուում է ոչ միայն որոշեալութեանը, այլեւ քերականական առկայացման միւս առումներին: Իմաստային տեսակէտից այն դրսեւորուում է իբրեւ առկայացման բացակայութիւն, այսինքն՝ ստացականութեան, դիմորոշութեան, ցուցականութեան եւ որոշեալութեան չգոյութիւն: Ունի նաեւ ձեւային հակադրութիւն. կազմուում է կա՛մ **զրօ** ձեւով (**Ø**), կա՛մ **մի** (արեւմտահայերէնում՝ **մը**) անորոշ յօդով: Այդ իսկ պատճառով միանգամայն տրամաբանական է այն որպէս առման առանձին ենթակարգ ընդունելը: Ներկայանում է երկու տարբերակով՝ 1. **ընդհանուր անորոշ առում**. կազմուում է **զրօ** վերջաւորութեամբ, այսինքն՝ առանց առկայացուցիչ յօդի, 2. **մասնական անորոշ առում**. կազմուում է **մի** մասնիկով, որը գործածուում է **մի** անորոշ յօդի արժէքով եւ շեշտուում է առարկայի անորոշութիւնը՝ **Մի միահոն աղջիկ տեսայ...., Որպէս անմիւր զրոյց մեզ պատմել են մի օր....**:

«Արեւելահայերէնում գոյականի անորոշ առման իմաստը,- գրում է Զահուկեանը,- **մի** մասնիկի միջոցով շեշտուում է (ինչպէս նաեւ **ինչ-որ, որեւէ, ինչ-ինչ** եւ նման բառերով). զարգացել է երգրաբարեան հայերէնում **մի** քանական թուականի հիմքի վրայ: Անորոշ առումը հակադրուում է որոշեալ առմանը **զրօ** ձեւոյթով, բայց անորոշութիւնը կարող է ուժեղացուել **մի** բառով, որ ձեւականօրէն փարբերակուելով **մէկ** թուականից՝ փաստօրէն ստացել է անորոշ յօդի արժէք. այլ կերպ ասած՝ հայերէնում սկսել է զարգանալ անորոշութեան վերլուծական արտայայտութիւնը»³¹: **Մի** անորոշ յօդը **մի/մէկ** թուականից տարբերակելու խնդիր է դնում նաեւ Մարգարեանը. «Թուականից սերող եւ գոյականների հետ լայնաբար գործածուող **մի**-ն ոչ թէ անորոշ դերանուն է, այլ յօդ է, որը պէտք է փարբերել նաեւ առանձնաբար գործածուող **մի/մէկ** քանականական թուականից»³²) եւ ուրիշներ:

Հայերէնի գիտական քերականութեան մէջ **մին** ի սկզբանէ առաւելապէս համարուել է անորոշ յօդ: «Որոշեալ կամ որոշիչ յօդէն ի զատ,- գրում է Այտընեանը,- ըսինք, կայ նաեւ Անորոշ յօդ ալ, որ է **մի** կամ **մը**. որուն պաշտօնն է անուան ընդհանուր միւրքը մասնաւորի ամփոփել՝ առանց ո՛րն ըլլալը որոշելու»³³: **Մին**՝ որպէս անորոշ յօդ, մասնաւորեցնող այդ նշանակութեամբ է բնութագրուում նաեւ Պալասանեանը. «Անորոշ յօդն է **մի**,- գրում է նա,- որ գործ է ածուում այն ժամանակ՝ երբ հարկ է առարկայի վրայ եղած ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի ամփոփել»³⁴:

³¹ Գ. Զահուկեան, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը, «Միտք» հրատ., Երեւան, 1969, էջ 187:

³² Մարգարեան, էջ 305:

³³ Այտընեան, էջ 24:

³⁴ Պալասանեան, էջ 37:

Կայ նաեւ կարծիք, որ **մին** արեւելահայերէնում յօդ չէ, այլ դերանուն է՝ միաժամանակ թուականի իմաստով, քանի որ յոգնակիի հետ չի գործածւում եւ յոգնակիում կարող է փոխարինուել **ինչ-որ, ինչ-ինչ** դերանուններով, **մի երկու, մի քանի, մի շարք, շատ, բազմաթիւ** եւ այլ անորոշ արտայայտութիւններով կամ ցանկացած թուականով: «**Մի թուականը**, - գրում է Արեղեանը, - երբ առանց շեշտելու դրում է **անյօդ** անուան վրայ, աշխարհաբարի քերականները, հետեւելով ուրիշ լեզուների քերականներին, դնում են յաճախ իբրեւ **անորոշ յօդ**, որ իբր թէ այլեւս թուական չլինէր եւ թուի գաղափար ցոյց չտար, այլ միայն անձի կամ իրի ընդհանուր, տարտամ գաղափար, ինչպէս մի անորոշ ածական: Սակայն այդ սխալ է. **մի** բառն ամէն դէպքում եւս թուական է, լինի շեշտուած, թէ անշեշտ, եւ մասնաւորում է անուան թիւը, որոշելով առարկայի մէկ լինելը»³⁵:

Մի անորոշ յօդի նշանակութիւնը ւելի շեշտուեց, երբ միջին հայերէնում թուականական նոյն իմաստի համար սկսեց գործածուել **մէկ** թուականը: Միջին հայերէնում գործածական են **միի՝** գրաբարին, արեւմտահայերէնին ու արեւելահայերէնին յատուկ դիրքային եւ, այսպէս կոչուած, ձեւային տարբերակները, որոնք, իդէպ, երբեմն հանդիպում են նաեւ միեւնոյն հեղինակի գործերում («ու երկրին տեսովն առնում մէկ **մի**», «եւ թագաւոր **մըն** է՝ յոր կարէ դեկան շինել» (Սմբատ Սպարապետ, 13րդ դար), «Դարպաս **մի** կայր», «Կղմինդր աղիւս **մ'այլ** ի յորմէն», «Վարպետ **մեկաւս**» (Ֆրիկ, 13րդ դար) են.)³⁶: Աշխարհաբարին բնորոշ ձեւերը միջին հայերէնի վաղ շրջանում հազուադէպ են հանդիպում. դրանք ւելի յաճախադէպ են ուշ միջնադարի՝ աշխարհաբարին մօտ լեզուով շարադրուած մատենագրութեան մէջ: Յետագայում **մը** ձեւը իր հնչիւնափոխուած միւս տարբերակներով (**մըն, մ'**) անցաւ արեւմտահայերէնին՝ վերջադաս գործածութեամբ (գիրք **մը**, տուն **մը**, մարդ **մըն** ալ, ցաւ **մ'անսահման**), իսկ գրաբարեան **մին** փոխանցուեց արեւելահայերէնին՝ նախադաս կիրառութեամբ (մի մարդ, մի գիրք, մի նկար):

Մի/ՄԸ յօդը երկու գրականներում էլ դրում է բոլոր հոլովածեւերի վրայ (Արտագրել եմ Մատենադարանի հնատիպ **մի գրքից**: Հազար աշխատող ունեմ. ամէն մէկը **մի հարցով** դիմում է, **Բաներ մը** ըսած էի: **Գրութեամբ մը** յայտնած եմ անոր: **Բարեկամէ մը** ստացած եմ):

Մին արեւելահայերէնում պահպանել է իր նիթական իմաստը (գործածւում է նաեւ **մէկ** թուականի նշանակութեամբ՝ **Մի օրը բաւական էր** են.): Շարադրանքում յաճախ, երբ յստակ չի ընդգծում անորոշութիւնը, այն

³⁵ Մ. Արեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, «Միտք» հրատ., Երեւան, 1965, էջ 526. Նաեւ՝ Աբրահամեան, էջ 111. Նաեւ՝ Ե. Աւետիսեան, Յ. Զաքարեան, *Ձեռքանութիւն*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2015, էջ 146-47. Նաեւ՝ Յ. Բարսեղեան, Փ. Մէլքիսեան, *Հայոց լեզու. դասագիրք 7-րդ դասարանի համար*, «Աստղիկ» հրատ., Երեւան, 2016, էջ 71 են.:

³⁶ *Միջին հայերէնի ուղեցոյց-քրեսոլոմափիա*, էջ 92-93:

ընկալում է ե՛ւ որպէս թուական, ե՛ւ որպէս անորոշ դերանուն, ինչպէս՝ «**Մի** (=մէկ//հնչ-որ) տող մոռացել եմ»: Այնուամենայնիւ, ժամանակակից հայերէնում որոշ դէպքերում **մի** թուականը հնարաւոր է տարբերակել **մի** անորոշ յօդից: Այսպէս՝

* եթէ **մի**ի լրացեալը որոշիչ յօդով է (**Մի տողը** մոռացել եմ, **Մի ձեռքը** ծափ չի տայ), ուրեմն **մին** տուեալ դէպքում ոչ թէ դերանուն է, այլ թուական (հմմտ.՝ *Աշնան մի օր հանդիպեցի նրան: // Աշնան մի օրը ծմռան մի շաբաթն է*),

* **մին**՝ որպէս թուական, սովորաբար շեշտ է կրում, իսկ որպէս յօդ՝ արտասանւում է շատ թոյլ շեշտով կամ անշեշտ (հմմտ.՝ *Մի մեքենայ գնեցի: // Մի՛ մեքենայ գնեցի, Բախար եմ ունեցել մի անգամ հանդիպելու նրան: // Բախար եմ ունեցել մի՛ անգամ հանդիպելու նրան*),

* շարահիւսական որոշակի կառոյցներում կարող են տարբերակուել՝ շարադասութեամբ, օրինակ՝ պայմանաւորուած օժանդակ բայի դիրքով (հմմտ.՝ *Մի անգամ եմ հանդիպել նրան (թւ.) // Մի անգամ հանդիպել եմ նրան (թւ./յօդ), Մի հարցով եմ դիմել նրան (թւ.) // Մի հարցով դիմել եմ նրան (թւ./յօդ)*), սահմանափակման վերաբերականների զուգահեռ գործածութեամբ (*Նա հետաքրքրուած էր միայն (սոսկ, գէթ, միմիայն) մի հարցով (թւ.)*) եւն.:

Ժամանակակից հայերէնում **մին**՝ որպէս բազմիմաստ բառ եւ տարարժէք խօսքի մաս, ունի նաեւ այլ կիրառութիւններ՝

* կամային վերաբերականի նշանակութեամբ կարող է դրուել բայերի դրական հրամայականի եւ ըղձական եղանակի ձեւերի վրայ. բնորոշ է խօսակցական լեզուին (*Մի հարցնող լինի՛*՝ ի՞նչ գործ ունէք այստեղ, *Մի կարդայ՛* տեսնեմ ոնց ես կարդում),

* քանակական թուականների վրայ դրուելով՝ արտայայտում է մօտաւորութեան իմաստ (*Մի հարիւր* անգամ տեսած կը լինես, *Մի քսան-երեսուն* հոգի կը լինէին): **Մի** թուականը/յօդը համանուն է արգելական հրամայականի **մի** քերականական մասնիկին (**մի՛** խօսիր, **մի՛** գնա):

Արեւմտահայերէնում **մին** յօդ է. չունի թուականական նշանակութիւն: Գործածւում է հնչիւնափոխուած տարբերակով՝ **մը** (**մ՛**)<**մի**>. վերջահար է. դրում է լրացեալից յետոյ (մարդ **մը**, մարդեր **մը**, հատ **մըն** ալ, կեանք **մ՛**անհուն. *Քեզմէ **գիրք մը** փոխ առի*)՝ ի տարբերութիւն արեւելահայերէնի նախահար դիրքի: Ունի շատ յաճախակի կիրառութիւն, հարուստ է ոճական-արտայայտչական հնարաւորութիւններով: Դրում է ինչպէս գոյականների եւ փոխանուն բառերի, այնպէս էլ այլ խօսքի մասերի վրայ («Նամակս **շուտ մը** գրեմ, հիմա գործիս պիտի վազեմ», «**Կամացուկ մը** դուրս կ'ելլէ տունէն»): Ի տարբերութիւն սակայն արեւելահայերէնի՝ **մըն** լրացեալից չի կարող միջարկուել որեւէ այլ լրացումով (հմմտ.՝ «**Մի** հետաքրքիր եւ անսովոր **իրավիճակում** յայտնուեցի» / «Հետաքրքիր եւ անսովոր **իրավիճակի մը** մէջ յայտնուեցայ»):

ԱՄՓՈՓՈՒՄ

Առկայացման քերականական կարգի տեսութեան քննութիւնը բերում է այն համոզման, որ հայերէնում քերականական այդ կարգի ձեւաիմաստային եւ կառուցուածքային նկարագրութիւնը տակաւին կարիք ունի հետազօտութեան ու վերաձեւակերպումների: Կարգի ընդունուած կամ առաջարկուող ներկառուցուածքային բաժանումներում երբեմն ուղղակիօրէն իրար են հակադրում մի կողմից՝ որոշեալութիւնը, միւս կողմից՝ ստացականութիւնը, ցուցականութիւնը եւ դիմորոշութիւնը: Մինչդեռ որոշեալութիւնը յատուկ է յօդային բոլոր առումներին. յօդերի բոլոր տեսակներն էլ, դրուելով համապատասխան բառերի վրայ, ցոյց են տալիս առարկայի տարրորոշուածութիւն, տարբերակուածութիւն, որոշեալութիւն: Այսինքն՝ որոշեալութեան քերականական իմաստը բնորոշ է յօդերի բոլոր տեսակներին՝ բացառութեամբ **մի/մը** անորոշ յօդի: Ասել է թէ՛ առկայացման քերականական կարգում իմաստային հակադրութեան մէջ են մի կողմից՝ անորոշութիւնը (առկայացման բացակայութիւնը), միւս կողմից՝ որոշեալութիւնը (առկայացման առկայութիւնը)՝ իր բոլոր դրսեւորումներով: Ըստ որի էլ՝ քննուող կարգում պէտք է առանձնացուեն երկու ենթակարգեր՝ **որոշեալութեան ենթակարգ**, որի ձեւային ցուցիչներն են ստացական (**ս, դ**, մասամբ՝ **ն/ը**), դիմորոշ (**ս, դ**) եւ որոշիչ յօդերը (**ն/ը**), եւ **անորոշութեան ենթակարգ**, որի ձեւային ցուցիչներն են **զրօ ձեւը** (ընդհանուր անորոշ առում) եւ **մի/մը** անորոշ յօդը (մասնական անորոշ առում):

Առկայացման քերականական կարգը սոյն յօդուածում ներկայացուած է այս մօտեցմամբ: Բուն յօդերի նկարագրութիւնը իրականացուել է զուգահրօական քննութեամբ՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի առանձնաշատկութիւնների համադրումով:

THE GRAMMATICAL CATEGORY OF NOUN DETERMINATION IN
MODERN ARMENIAN: SUBCATEGORIES OF DEFINITION AND INDEFINITION
(SUMMARY)

YURI AVETISYAN
yuavetisyan@mail.ru

The semantic aspects of the grammatical category of occurrence and the forms of grammatical expression have often undergone changes during the historical development of the Armenian language. That is why they have often become the subject of examination and discussion in Armenian grammars. The question was addressed more or less thoroughly by M. Abeghyan, H. Acharyan, S. Abrahamyan, G. Jahukyan, M. Asatryan, H. Petrosyan, H. Cholakyan, A. Yeghiayan and others. A large amount of work has been done, a very detailed and thorough examination has been made. However, we believe that certain classification points and principles need to be reviewed and reformulated today. This study is aimed at that goal.

In the accepted or proposed intrastructural divisions of the grammatical category of determination, definiteness, on the one hand, and receptivity, enumerability, and addressability, on the other hand, are sometimes directly opposed to each other. Meanwhile, determination is specific to all aspects of the joint. All types of joints, placed on the corresponding words, show the differentiation of the subject. In other words, the grammatical meaning of definiteness is characteristic of all other types of articles, except for one indefinite article. That is to say, in the grammatical category of determination, on the one hand, uncertainty (absence of definition) and, on the other hand, certainty (existence of definition) with all its manifestations are in semantic opposition. According to this, two subcategories should be distinguished in the category under examination: the subcategory of definiteness, the form indicators of which are accusative (s, d, partly n/h), adverbial (s, d) and determinative articles (n/h), and the subcategory of uncertainty, whose formal indicators are zero form (general indefinite) and one indefinite article (partial indefinite).

The grammatical category of occurrence is presented in this article with this approach. The description of the joints itself was carried out by comparative examination, combining the characteristics of Eastern Armenian and Western Armenian.

Key words - grammatical category, grammatical meaning, grammatical form, determination, suborder of definiteness, suborder of indefiniteness, articles, accusative, individual, demonstrative, Eastern Armenian, Western Armenian.